

**ՏԵՂԵԿԱԼՔ**

**Լոռու մարզի արդյունաբերության ոլորտի 2013թ. հունվար-մայիս ամիսների աշխատանքների մասին**

2013 թվականի հունվար-մայիս ամիսներին մարզի արդյունաբերական ձեռնարկություններն ընթացիկ (գործող) գներով թողարկել են 26,320.82 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2012 թվականի համապատասխան ժամանակաշրջանի 25,198.25 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 104.5%, բացարձակ աճը՝ 1,122.57 մլն դրամ:

Այս տարվա մայիս ամսին 2012թ-ի մայիսի համեմատ մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 1.4%-ով, իսկ այ 2013թ-ի ապրիլ ամսվա համեմատ ցուցանիշը նվազել է 3.2%-ով:

2013թ. հունվար-մայիս ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- **մշակող արդյունաբերություն** 21,020.73 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 103.4% և տեսակարար կշիռը՝ 79.9%
- **հանքարդյունահանումը** համապատասխանաբար՝ 3,664.29 մլն դրամ, 100.9% և 13.9%,
- **էլ. էներգիայի արտադրությունը**՝ 1,635.81 մլն դրամ, 132.5% և 6.2%:

Նախորդ՝ 2012 թվականի նույն ժամանակահատվածում արդեն նկատելի էին մարզի արդյունաբերության ոլորտի միտումները՝ հանքարդյունաբերության ճյուղի ծավալների աճ, պայամանավորված «Սազամար» ՄՊԸ-ի գործարկմամբ և դրան զուգահեռ մշակող արդյունաբերության ճյուղի տեսակարար կշռի նվազում: Այս տարի այդ միտումը զգալի չէ, Արմանիսի ոսկի-բազմամետաղների հանքավայրի շահագործումն ու հանքաքարի վերամշակումն ընթանում է արդեն սովորական հունով: 2013 թվականի առաջին 5 ամիսների արդյունքներով արտադրական հիմնական ցուցանիշների դրական տեղաշարժ է արձանագրում «Ախթալայի ԼՀԿ» ընկերությունը, որի արդյունքում, այս տարվա ապրիլ ամսվա համեմատ ճյուղի տեսակարար կշիռն աճել է 0.9%-ով: Չնայած դրան դեռևս գերակշիռ է մնում մշակող արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը: Զգալի աճ է արձանագրվել նաև էներգետիկայի ճյուղի ցուցանիշներում՝ 32.5%-ով աճել է ոչ միայն ճյուղի ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի (էլեկտրաէներգիայի) ծավալը դրամային արտահայտությամբ, այլ նաև 23.5%-ով կամ 16.40 մլն կՎտ-ով աճել է էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը բնեղեն արտահայտությամբ: Անցած հինգ ամսվա արդյունքներով 14 էլեկտրակայան ավելացրել են էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները (մարզում գործում է 25 էլեկտրակայան, որից 24-ը ՀԵԿ-եր են):

2013թ. հունվար-մայիս ամիսներին մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

| (հազ. դրամ) |                                    |                      |                      |         |  |
|-------------|------------------------------------|----------------------|----------------------|---------|--|
|             | Ճյուղի անվանումը                   | 2013թ. հունվար-մայիս | 2012թ. հունվար-մայիս | աճը (%) | 2013թ. հունվար-մայիս տես. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%) |
| 1.          | Քիմիական արդյունաբերություն        | 469,497.0            | 313,152.0            | 149.9   | 2.2  |
| 2.          | Թեթև արդյունաբերություն            | 355,197.0            | 360,237.0            | 98.6    | 1.7  |
| 3.          | Մանրի արդյունաբերություն           | 1,212,452.0          | 843,137.0            | 143.8   | 5.8  |
| 4.          | Մեքենաշինություն և սարքաշինություն | 369,334.0            | 984,094.0            | 37.5    | 1.8  |
| 5.          | Փայտամշակում և կահույքի արտադրութ. | 16,674.0             | 14,052.0             | 118.7   | 0.1  |

|                 |             |                     |                     |              |              |
|-----------------|-------------|---------------------|---------------------|--------------|--------------|
| 6.              | Մետալուրգիա | 18,370,488.0        | 17,621,740.0        | 104.2        | 87.4         |
| 7.              | Այլ ճյուղեր | 227,086.0           | 196,494.0           | 115.6        | 1.1          |
| <b>Ընդամենը</b> |             | <b>21,020,728.0</b> | <b>20,332,906.0</b> | <b>103.4</b> | <b>100.0</b> |

Մշակող արդյունաբերության կառուցվածքում շարունակում է գերակշիռ դերակատարություն ունենալ մետալուրգիայի ենթաճյուղը: Ի տարբերություն 2012 թվականի, երբ արտադրության ծավալների էական աճ նորպես արդյունք տեսակարար կշռի զգալի աճ ապահովեց մեքենաշինության և սարքաշինության ճյուղը, այս տարվա 5 ամիսների արդյունքներով (2013թ. հունվար-մայիս ամիսների նկատմամբ արտադրության ծավալների ավելի քան 62% նվազում) ցույց են տալիս, որ մեքենաշինության և սարքաշինության ենթաճյուղի ձեռնարկությունների համար լուջ հիմնախնդիր է արտերկրում կայուն գործընկեր գտնելը, ինչպես նաև ցածր ինքնարժեքի հաստատումը: Նշենք, որ այս ենթաճյուղի ընկերությունների արտադրանքի գերակշիռ մասը արտահանվում է ԱՊՀ երկրներ:

Կայուն գործընկերների և սպառման շուկաների գտնելը արդեն ավելի քան 7 տարի է ինչ հիմնախնդիր է հանդիսանում մարզի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների համար: Ներկայումս ենթաճյուղի ձեռնարկություններից երեքն աշխատում են իրենց հզորությունների 7÷15%-ի սահմաններում: Բացառություն է հանդիսանում թերևս «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության գործունեությունը, որի ինտենսիվ մարքեթինգային քաղաքականության և ներդրումների արդյունքում ապահովվում է կայուն արտադրական գործընթաց:

2013 թվականի անցած հինգ ամիսների արդյունքներով մարզի մշակող արդյունաբերության կառուցվածքում զգալի փոփոխություններ կարող է մտցնել քիմիական արդյունաբերության ենթաճյուղի ձեռնարկությունները, որոնք միասին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ թողարկել են 136.35 մլն դրամի ավելի արտադրանք:

Մարզի առաջատար ենթաճյուղի՝ «Մետալուրգիա»-ի ցուցանիշներն 2013թ. հունվար-մայիս ամիսներին կայունացել է, որը առավելապես պայմանավորված է միջազգային շուկաներում գների կայունացման հետ: «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն այս տարվա անցած 5 ամիսներին բնեղեն արտահայտությամբ արտադրել է 630.4 տոննա ավելի կոնվերտորային պոլիմեր:

2013 թվականի հունվար-մայիսին ևս մարզի 8 ձեռնարկություններ դեռևս արտադրանք չեն թողարկել (հունվար-փետրվարին՝ 35, հունվար-մարտին՝ 13, հունվար-ապրիլին՝ 8 ձեռնարկություն): Դրանք հիմնականում այն ձեռնարկություններն են, որոնց աշխատանքը կապված է սեզոնային գործունի հետ, մասնավորապես անտառտնտեսությունները:

2013թ. հունվար-մայիս ամիսների արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 69.79% (փետրվարին՝ 79.86%, մարտին՝ 75.43%, ապրիլին՝ 71.87%), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 8.16% (փետրվարին՝ 6.17%, մարտին՝ 6.87%, ապրիլին՝ 7.77%), «Սազամար» ՓԲԸ-ն՝ 5.42% (փետրվարին՝ 4.27%, մարտին՝ 4.66%, ապրիլին՝ 4.94%), «Ձորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 2.93% (փետրվարին՝ 1.37%, մարտին՝ 1.78%, ապրիլին՝ 2.33%), «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 2.41% (փետրվարին՝ 0.63%, մարտին՝ 1.82%, ապրիլին՝ 2.36%): Արդեն հստակ զգալի է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ի տեսակարար կշռի նվազման և զուգահեռ այլ առաջատար ընկերությունների տեսակարար կշիռների աճի միտումը:

Ըստ տարածաշրջանների 2013 թվականի հունվար-մայիս ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

| Տարածաշրջանի անվանումը | 2013թ. հունվար-մայիս | 2012թ. հունվար-մայիս | Աճը       |       | Տեսակարար կշիռը (%) |
|------------------------|----------------------|----------------------|-----------|-------|---------------------|
|                        |                      |                      | Բացարձակ  | (%)   |                     |
| Սպիտակ                 | 727,750.0            | 431,868.0            | 295,882.0 | 168.5 | <b>2.76</b>         |
| Տաշիր                  | 251,853.0            | 166,553.0            | 85,300.0  | 151.2 | <b>096</b>          |
| Գուգարք                | 1,169,542.0          | 910,681.0            | 258,861.0 | 128.4 | <b>4.44</b>         |

|                 |                     |                     |                    |              |               |
|-----------------|---------------------|---------------------|--------------------|--------------|---------------|
|                 |                     |                     |                    |              |               |
| Ստեփանավան      | 1,715,651.0         | 1,994,200.0         | -278,549.0         | 86.0         | <b>6.52</b>   |
| Թումանյան       | 20,728,433.0        | 19,654,366.0        | 1,074,067.0        | 105.5        | <b>78.75</b>  |
| Վանաձոր         | 1,727,595.0         | 2,040,585.0         | -312,990.0         | 84.7         | <b>6.56</b>   |
| <b>Ընդամենը</b> | <b>26,320,824.0</b> | <b>25,198,253.0</b> | <b>1,122,571.0</b> | <b>104.5</b> | <b>100.00</b> |

2013 թվականի հունվար-մայիս ամիսների արդյունքներով արտադրության ծավալի նվազում են արձանագրել Ստեփանավանի՝ 14.0%-ով («Սագամար» ՓԲԸ-ի արտադրության ծավալների նվազում) և քաղաք Վանաձորի՝ 15.3%-ով (քաղաքի մեքենաշինության ու սարքաշինության 3 ընկերությունների արտադրության ծավալների անկում) արդյունաբերական ձեռնարկությունները:

Ուրբախյանի է, որ վերջին արդեն երկրորդ ամիսն է՝ (15 ամսվա ընթացքում) մայիս ամսվա արդյունքներով ևս մարզի Տաշիրի տարածաշրջանի ձեռնարկություններն արտադրության 51.2% աճ են գրանցել (միայն մայիս ամսվա արդյունքներով 210.5%), որը հատկապես պայմանավորված է ինչպես հայաստանյան ներքին շուկայում պանրի պահանջարկի, այնպես էլ ԱՊՀ երկրներ արտահանման աճով:

2013 թվականի հունվար-մայիս ամիսներին արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 22 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

|     | Արտադրանքի անվանումը                   | Չափի միավորը | 2013թ. հունվար-մայիս | 2012թ. հունվար-մայիս | Բացար-ձակ աճը |
|-----|--|--------------|----------------------|----------------------|---------------|
| 1.  | Էլեկտրաէներգիա                         | մլն. կվտ.ժամ | 92.4                 | 77.0                 | 15.4          |
| 2.  | Էլեկտրաշարժիչներ                       | հատ          | 1152                 | 2100                 | -948          |
| 3.  | Ավտոգենային սարքավորումներ             | հազ. հատ     | 46.2                 | 78.0                 | -31.8         |
| 4.  | Տրակտորներ                             | հատ          | 0                    | 63                   | -63           |
| 5.  | Պղինձ՝ պղնձի խտանյութում               | տոննա        | 783.4                | 665.2                | 118.2         |
| 6.  | Ցինկի խտանյութ                         | տոննա        | 1869.0               | 1728.0               | 141.0         |
| 7.  | Պղինձ կոնվերտորային                    | տոննա        | 4881.2               | 4160.3               | 720.9         |
| 8.  | Պղնձի խտանյութ                         | տոննա        | 4923.8               | 4415.0               | 508.8         |
| 9.  | Սինթետիկ կորունդ                       | կգ.          | 4319.7               | 3375.8               | 943.9         |
| 10. | Լաքաներկանյութեր                       | տոննա        | 53.7                 | 22.9                 | 30.8          |
| 11. | Լվացող, մաքրող և օւլայող միջոցներ      | տոննա        | 291.0                | 314.0                | -23.0         |
| 12. | Շինամիստ                               | տոննա        | 17.0                 | 86.1                 | -69.1         |
| 13. | Պատանյութեր                            | տոննա        | 640.4                | 1041.5               | -401.1        |
| 14. | Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ      | տոննա        | 2984.7               | 2562.0               | 422.7         |
| 15. | Ոչ հանքային շինանյութեր                | տոննա        | 16373.2              | 3354.0               | 13019.2       |
| 16. | Ալյումինե մետաղապլաստ դոներ, պատուհան. | հատ          | 208                  | 109                  | 99            |
| 17. | Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ    | հազ. հատ     | 43.7                 | 41.5                 | 2.2           |
| 18. | Պանիր                                  | տոննա        | 93.5                 | 109.4                | -15.9         |

|    |   |       |       |       |        |
|----|---|-------|-------|-------|--------|
| 19 | Հաց   | տոննա | 691.0 | 840.4 | -149.4 |
| .  |   |       |       |       |        |
| 20 | Գաթնամթերք (թթվասեր, կաթնաշոռ, մածուն, թան) | տոննա | 55.6  | 45.6  | 10.0   |
| .  |   |       |       |       |        |
| 21 | Հրուշակեղեն                                 | տոննա | 40.0  | 27.7  | 12.3   |
| .  |   |       |       |       |        |
| 22 | Մակարոնեղեն                                 | տոննա | 14.8  | 26.8  | -12.0  |
| .  |   |       |       |       |        |

Ըստ մարզային վիճակագրական տվյալների 2013թ. հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, չնայած ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների 24.6% նվազման, 11.1%-ով աճել է արտահանման ծավալները: